



«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ
“DiverCity” Social-Cultural, Human Rights Defender NGO



**Նախագորակոչային և գորակոչային
տարիքի խոցելի ու թիրախավորված
քաղաքացիների համար ձեռնարկ**



Նախագորակոչային և զորակոչային տարիքի խոցելի ու թիրախավորված քաղաքացիների համար ձեռնարկ



divercity.am

+37455793507
ngo.divercity@gmail.com



© «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Երևան | 2022



Ձեռնարկը հրատարակվել է «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ-ի կողմից իրականացվող «Նպաստել խտրականության նվազեցմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բազմազանություն» ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: Ձեռնարկի նպատակն է ՀՀ քաղաքացի հանդիսացող խոցելի ու թիրախավորված խմբերի շրջանում իրազեկել նախագորակոչի և գորակոչի գործընթացի և իրենց իրավունքների մասին, դրանց կազմակերպումն ապահովող և բժշկական փորձաքննություններ իրականացնող մարմինների պարտականությունների ու իրավունքների մասին:

Ձեռնարկը կազմեց՝ Արտակ Ադամ Առաքելյանը
Խմբագիր՝ Անահիտ Մկրտչյան
Համակարգչային ձևավորումը՝ Արաքս Սաֆարյանի

Ձեռնարկը նախատեսված է նախագորակոչային և գորակոչային տարիքի խոցելի ու թիրախավորված քաղաքացիների համար (ԳԲՏԶ+, հաշմանդամություն ունեցող, ենթամշակութային և հակամշակութային պատկանելություն ունեցող, փոքրամասնություն կազմող ազգային այլ ինքնություն ունեցող անձինք), նրանց ընտանիքի անդամների, խնամակալների, ներկայացուցիչների, նրանց հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների, անհատների, ինչպես նաև իրավաբանների և իրավունքի այս բնագավառով հետաքրքվող այլ անձանց համար:

© «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Երևան | 2022

Բովանդակություն

Հապավումներ և օգտագործված եզրույցներ	5
Ի՞նչ է գինապարտությունը	11
Ձինվորական հաշվառում	11
Ձինվորական հաշվառման գործընթացում քաղաքացիների պարտականությունները Ձինվորական հաշվառման գործընթացում քաղաքացիների իրավունքները	
Ձորակոչիկների իրավունքները և պարտականությունները զորակոչի ընթացքում	14
Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին մասնակցելու քաղաքացիների պարտականությունները Ձորակոչային տարիքի ՀՀ արական սեռի քաղաքացիների իրավունքները Իրազեկված համաձայնության իրավունք	
Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերը	21
Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերը	23
Առողջական վիճակի պատճառով տարկետում տալը Ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տալը Նպատակային ուսումնառության համար տարկետում տալը Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումների համար տարկետում տալը	
Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող և քաղաքացիների բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն ու վերջիններիս գործառույթները	30
Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմինները Քաղաքացիների բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները	

**Նախագորակոչային և գորակոչային տարիքի
քաղաքացիների
բժշկական հետազոտությունները**

35

**Ոչ խտրական եվ զգայուն մոտեցում խոցելի ու
թիրախավորված նախագորակոչիկների ու
գորակոչիկների նկատմամբ**

37

Ի՞նչ է խտրականությունը
Խտրականության արգելքը
Հաշմանդամություն ունեցող նախագորակոչիկների և
գորակոչիկների համար
ԳԲՏԶ+ նախագորակոչիկների և գորակոչիկների համար
Կրոնական տարբեր ուղղությունների հետևորդ,
մեծամասնությունից տարբերվող հավատք ունեցող, կրոնական
կազմակերպությունների անդամ հանդիսացող կամ կրոնական
հավատալիքներ չունեցող նախագորակոչիկների և
գորակոչիկների համար

Հապավումներ և օգտագործված եզրույթներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ՀՈՒ	Հինված ուժեր
ԿԲՀ	Կենտրոնական բժշկական հանձնաժողով
ՀԲՀ	Հինկոմիսարիատների բժշկական հանձնաժողով
ՌՈՒՀ	Ռազմական ուսումնական հաստատություն
ԱՊ ՀԲՀ	Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողով
ԳԲՏԶ+	գեյ, բիսեքսուալ, տրանս, քվիր և այլ սեռական ուղղվածություն ու գենդերային ինքնություն ունեցող անձ
Հինվորական կոմիսարիատ	ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում
Անձնական տվյալ	ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը

Ապագենդեր

անձ, որը չի նույնականանում և անգամ չի էլ մտահոգվում գենդերային ինքնություն ունենալու համար

Բժշկական գաղտնիք

պացիենտի առողջական վիճակի մասին կամ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու մասին, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ընթացքում պարզված տվյալներ

Բժշկական միջամտություն

գործողություն, որն իրականացնում է բուժաշխատողը պացիենտի հետ՝ առողջությունը կամ ախտաբանական վիճակը գնահատելու, բարելավելու, փոփոխելու նպատակով

Բիզենդեր

գենդերային ինքնություն, երբ անձը հանդես է գալիս երկու գենդերային ինքնությամբ

Բիսեքսուալ կամ երկսեռական

սեռական ուղղվածություն, որը վերաբերում է թե՛ նույն, թե՛ հակառակ սեռի նկատմամբ խորը զգացմունքային, հուզական, սեռական գրավչություններ, ինտիմ և սեռական հարաբերություններ ունեցող անձանց

Բուդդայականություն

երեք համաշխարհային կրոններից մեկն է, որը հիմնված է Բուդդայի ուսմունքի վրա

Ինտերսեքս (միջսեռական)

կամ երրորդ սեռ: Անձ, որն ունի արտաքին կամ ներքին՝ արական կամ իգական սեռական օրգաններ

Իրազեկված համաձայնություն

անձի տված համաձայնությունը՝ նրան հասկանալի լեզվով տրամադրված

	ամբողջական, օբյեկտիվ և հասանելի տեղեկատվության հիման վրա
Ազենդեր	«առանց գենդերի» անձ, որը չի նույնականացնում իրեն որևէ գենդերի հետ
Աթեիստ	անձ, որը չի հավատում աստվածների գոյությանը, կամ աստծո մասին համոզմունքներ չունի
Գենդեր	գենդերային ինքնություն կամ սոցիալական սեռ. հասարակական հասկացություն (սոցիալական կատեգորիա), որը վերաբերում է յուրաքանչյուր անձի՝ իր իսկ սեռին վերագրված կանացիության ու առնականության ներքին ընկալմանը և կարող է չհամապատասխանել կամ համապատասխանել անձնագրային սեռին (ծննդյան պահին տրված սեռ): Պայմանավորված է տվյալ հասարակության մշակույթով, մենթալիտետով, կերպարային կադապարներով և վերաբերում է անձի զգացողություններին իր սեռի, մարմնի, արտաքին տեսքի, վարքի նկատմամբ, որոնք ենթակա են կամ չեն փոփոխման
Էյբլիզմ	խտրականության դրսևորում՝ պայմանավորված ֆիզիկական թերություններով: Հիմնականում դրսևորվում է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ
Ծանուցում	անձին առձեռն, պաշտոնական էլեկտրոնային փոստով, փոստային կամ կապի այլ միջոցով տրամադրման ենթակա տեղեկատվություն

Հաշմանդամություն	մարմնական կամ մտավոր շարունակական դրություն, վիճակ, որը սահմանափակում է անձի գործողությունները
Յետերոսեքսուալ (տարասեռական)	սեռական ուղղվածություն, որը վերաբերում է հակառակ սեռի նկատմամբ խորը զգացմունքային, հուզական, սեռական գրավչություններ, ինտիմ և սեռական հարաբերություններ ունեցող անձանց
Հուդայականություն	երեք մոնոթեիստական կրոններից մեկն է: Հրեա ազգի կրոնական, ազգային և բարոյագիտական աշխարհայացքն է՝ հիմնված Թորայի վրա
Մահմեդականություն	կամ իսլամ: Համաշխարհային երեք կրոններից մեկն է
Նույնասեռական (լեսբի, գեյ), (հոմոսեքսուալ)	սեռական ուղղվածություն, որը վերաբերում է նույն սեռի նկատմամբ խորը զգացմունքային, հուզական, սեռական գրավչություններ, ինտիմ և սեռական հարաբերություններ ունեցող անձանց
Ոչ բինար (ոչ բինարություն, ոչ բինար համակարգ)	ցանկացած գենդերային ինքնություն, որը չի համապատասխանում կանացիության ու առնականության երկբևեռ համակարգին
Սեգրեգացիա	խտրական ցանկացած գործողություն կամ անգործություն, որով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք առանձնացվում, տարբերակվում ու արդյունքում մեկուսացվում են այլ անձանցից՝ պաշտպանված հատկանիշներից որևէ մեկով

**Սեռական
ուղղվածություն**

սեռականության բաղադրիչներից մեկը, որը բնորոշ է յուրաքանչյուրին: Անձի խորը զգացմունքային, հուզական, ինտիմ և սեռական գրավչությունների ամբողջությունը՝ այլ անձի նկատմամբ: Նույնն է՝ ինչ սեռական կողմնորոշումը

Վիկտիմիզացիա

անձի նկատմամբ բացասական հետևանքներ առաջացնող գործողություն կամ անգործություն, որը կատարվում է զուտ այն պատճառով, որ տվյալ անձն իր իրավունքները պաշտպանելիս դիմել է իրավական պաշտպանության որևէ միջոցի կամ ներկայացրել է խախտումների մասին տեղեկատվություն իրավասու պետական կամ այլ մարմինների՝ այդ թվում՝ նաև խտրականության մասին

Վիրավորանք

խոսքի, պատկերի, ծայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտություն

Տարկետում

որոշակի ժամկետով որևէ բանի հետաձգում: Զորակոչիկին բանակ տանելը որոշակի ժամանակով հետաձգելը¹

**Տրանսգենդեր
(փոխգենդեր)**

գենդերային ինքնություն, որի դեպքում անձը փոփոխում է իր գենդերը՝ հանդես գալով հակառակ սեռին պատկանող գենդերային ինքնությամբ

¹ Էդուարդ Բագրատի Աղայան: «Յայաստան» Զրատարակչություն, Երեւան, 1976:

**Տրանսսեքսուալ
(փոխսեռական)**

անձ, որը փոխում է իր
կենսաբանական սեռը և հանդես է
գալիս հակառակ կենսաբանական
սեռով

Քվիր, քվիրգենդեր

անձրևանոցային եզրույթ այն
անձանց համար, որոնք չեն
նույնականանում հետերոսեքսուալ
(տարասեռական) և ցիսգենդեր:
Ծագում է քվիր տեսությունից, որն
առաջացել է ակտիվիզմից և
քննադատում է ինքնությունները,
հատկապես գենդերային ու սեռական,
խնդրականացնում է սեռի և գենդերի
միջև բիևար հարաբերությունները,
քննում է նորմատիվային ու
նորմավորված սեռականություններն
ու ձևակերպումները

ՍՈՒԳԻ

սեռական ուղղվածություն և
գենդերային ինքնություն, նույնն է ինչ
ՍԿԳԻ (սեռական կողմնորոշում ու
գենդերային ինքնություն)

**Խոցելի անձ կամ
խումբ**

անձ կամ խումբ, որոնք իրենց որևէ
հատկանիշով կամ կարգավիճակով
պայմանավորված տևական
ժամանակ գտնվում են խոցելի
վիճակում

**Թիրախավորված անձ
կամ խումբ**

սույն ձեռնարկում օգտագործված է
նկարագրելու խոցելի խմբերին, որոնք
գորակոչի գործընթացում
թիրախավորումների կենտրոնում են
լինում՝ պայմանավորված իրենց
ՍՈՒԳԻ-ով, հաշմանդամության
կարգավիճակով և այլն

ԻՆՉ Է ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդված. «Զինված ուժերը և պաշտպանությունը»

(...) 3. Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: (...):

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված².

Զինապարտությունը ՀՀ պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է: Այն ընդգրկում է՝

- 1) զինվորական հաշվառումը,
- 2) զինվորական ծառայությանը նախապատրաստությունը,
- 3) զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայությունը,
- 4) զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայությունը,
- 5) պահեստազորում հաշվառումը և պահեստազորային պատրաստությունը:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱԾՎԱԴՈՒՄ

ՀՀ ցանկացած 16 տարին լրացած արական սեռի քաղաքացի ենթակա է **զինվորական հաշվառման**, որի կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը³:

Զինվորական հաշվառում իրականացվում է տվյալ քաղաքացու հաշվառման բնակության վայրի զինվորական կոմիսարիատը:

Եթե 16 տարեկան արական սեռի քաղաքացին հաշվառված է արդեն, այն զինվորական կոմիսարիատը, որը հաշվառել է պետք է տրամադրի **զինվորական հաշվառման գրքույկ**:

² <https://www.arlis.am/documentview.aspx?docid=147117>

³ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=126601>

Յուրաքանչյուր 16 տարին լրացած արական սեռի քաղաքացի գինվորական հաշվառման ենթարկվելիս անցնում է առողջական վիճակի բժշկական քննություն՝ **հավասար պայմաններում**, որն առաջնահերթ է կատարվում և անվճար, ամբողջությամբ երաշխավորվում է պետության կողմից:

Զինվորական հաշվառման գործընթացում քաղաքացիների պարտականությունները⁴

- Քաղաքացիները պարտավոր են 16 տարեկանը լրանալուց հետո գինվորական հաշվառման համար ներկայանալ իրենց հաշվառման վայրի գինվորական կոմիսարիատ:
- Զինվորական ծառայությունից օրենքով սահմանված կարգով արձակված քաղաքացիները պարտավոր են յոթ աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ իրենց հաշվառման վայրի գինվորական կոմիսարիատ՝ գինվորական հաշվառման կանգնելու համար:
- Հաշվառման վայրը փոխելու դեպքում գինապարտները գինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան գինվորական կոմիսարիատ հաշվառման նոր վայր ժամանելուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:
- Զինվորական ծառայության ընթացքում ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված և պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթ աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ հաշվառման վայրի գինվորական կոմիսարիատ գինվորական հաշվառման կանգնելու համար:
- Զինվորական հաշվառման պարտականությունների խախտումը քաղաքացիների համար հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=147117>

Ձինվորական հաշվառման գործընթացում քաղաքացիների իրավունքները

Քաղաքացիներն իրավունք ունեն.

- ծանոթանալու իրենց զինվորական հաշվառման վերաբերյալ տվյալներին և առաջարկություններ անել, եթե դրանցում կարիք կա շտկումներ կատարելու⁵,
- եթե կարիք կա շտկելու խտրական տերմինները կամ վիրավորական բառերն ու արտահայտությունները, պետք է անել առաջարկություններ համապատասխան մարմիններին (ՀՀ ՊՆ, Կառավարություն, ԱԺ և այլն), հիմնավորելով դրանցում փոփոխության անհրաժեշտությունը,
- պահանջել, որպեսզի չոտնահարվի իրենց արժանապատվության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված)⁶,
- պահանջել, որպեսզի բացառվի ցանկացած տեսակ խտրականություն (ՀՀ Սահմանադրություն 29-րդ հոդված)⁷, ընդհուպ մինչև սեռական ուղղվածության ու գենդերային ինքնության հիմքով,
- պահանջել, որ փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցեն զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին, որը պետք է ստանալ անձամբ և որը պետք է ներառի զինվորական կոմիսարիատ ներկայանալու ժամկետները⁸,
- բացակայել կամ ազատվել աշխատանքից և ուսումից՝ զինվորական կոմիսարիատ ներկայանալու համար՝ ծանուցագրում նշված ժամկետներով⁹,
- պետության կողմից երաշխավորված կերպով հետազոտվել և անհրաժեշտության դեպքում բուժում ստանալ առաջնահերթ կարգով և անվճար¹⁰,
- ծանոթանալ իրենց մասին բժիշկ-փորձագետների

⁵ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=126601>

⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>

⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>

⁸ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=126601>

⁹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=147117>

¹⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151135>, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=155050>

եզրակացությանը և առողջական վիճակի հետազոտության ակտերի օրինակներին, ստանալ դրանց կրկնօրինակները՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով¹¹,

Պետք է իմանալ, որ քաղաքացին չի ազատվում զորահավաքից կամ վարժական հավաքից, քանի որ թեև նա հանդիսանում է նաև այլ պետության քաղաքացի՝ առաջին հերթին հանդիսանում է ՀՀ քաղաքացի, որը նշանակում է, որ ՀՀ Սահմանադրության հիման վրա, յուրաքանչյուր քաղաքացի ենթակա է պարտադիր զինվորական ծառայության, անկախ այն հանգամանքից ծառայել է այլ պետությունում, թե՛ ոչ¹²:

ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Զորակոչի ենթակա են 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 27 տարին լրանալը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները՝ մինչև 35 տարին լրանալը: Հայտարարված զորակոչին պարտադիր զինվորական ծառայության ենթակա են նաև այն քաղաքացիները և պահեստազորի սպայական կազմը, որոնց համապատասխանաբար 27 և (կամ) 35 տարին լրանում է տվյալ զորակոչի ընթացքում:

¹¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151135>, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153795>,

¹² <https://www.arlis.am/documentview.aspx?docid=152332>, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

Ձինվորական ծառայության տեսակներն են¹³

- 1) ժամկետային,
- 2) պահեստազորային,
- 3) զորահավաքային:

Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից:

Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝

- 1) շարքային կազմի համար՝ 24 ամիս (...),
- 2) պահեստազորի սպայական կազմի համար՝ 24 ամիս,
- 3) պարտադիր զինվորական ծառայություն չանցած և ռազմաուսումնական հաստատություններ ընդունված անձանց համար՝ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության ժամկետով, որը ռազմաբժշկական բնույթի ռազմաուսումնական հաստատություններում սովորողների մասով ներառում է նաև ինտերնատուրայում ուսումնառության ժամկետը:

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ¹⁴:

Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան մեկ անգամ¹⁵:

¹³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

¹⁴ Տե՛ս օրինակ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/36152/>

¹⁵ Տե՛ս օրինակ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/35383/>

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին մասնակցելու քաղաքացիների պարտականությունները

Զորակոչի ենթակա քաղաքացիները պարտավոր են ծանուցման մեջ նշված ժամկետում ներկայանալ իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավել մոտ զինվորական կոմիսարիատ, որի դեպքում քաղաքացու ներկայացած զինվորական կոմիսարիատում ճշտվում է քաղաքացու կողմից իր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալու հետ կապված խնդիրը և ներկայանալու հնարավոր ժամկետը, որի վերաբերյալ գրավոր տեղեկացվում է քաղաքացու հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատին, ինչպես նաև համաձայնեցնելով այդ զինվորական կոմիսարիատի հետ՝ քաղաքացուն փաստաթղթային եղանակով տրամադրում է նոր ծանուցագիր վերջինիս հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին¹⁶։ Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին մասնակցելու պարտականության խախտումը քաղաքացիների համար հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության¹⁷։

Զորակոչային տարիքի ԶՅ արական սեռի քաղաքացիների իրավունքները

Զորակոչային տարիքի քաղաքացիներն իրավունք ունեն.

- պահանջել, որպեսզի զորակոչի ընթացքում չոտնահարվի իրենց արժանապատվության իրավունքը (ԶՅ Սահմանադրության 3-րդ հոդված)¹⁸,

¹⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152590>

¹⁷ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

¹⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>

- պահանջել, որպեսզի բացառվի ցանկացած տեսակ խտրականություն (ՀՀ Սահմանադրություն 29-րդ հոդված)¹⁹, ընդհուպ մինչև սեռական ուղղվածության ու գեղդերային ինքնության հիմքով,
- պահանջել, որ փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցեն զինվորական կոմիսարիատ Ներկայանալու մասին, որը պետք է ստանալ անձամբ և որը պետք է Ներառի զինվորական կոմիսարատ Ներկայանալու ժամկետները²⁰,
- բացակայել կամ ազատվել աշխատանքից և ուսումից՝ զինվորական կոմիսարիատ Ներկայանալու համար՝ ծանուցագրում նշված ժամկետներով²¹,
- զորակոչի ժամանակ անցնել առողջական վիճակի հետազոտություն և փորձաքննություն և, եթե կարիք կա անվճար և առաջնահերթ կարգով բուժում ստանալ, որը երաշխավորված է պետության կողմից օգնության և սպասարկման շրջանակներում²²,
- պահանջել և ծանոթանալ իրենց մասին բժիշկ-փորձագետների եզրակացությանը և առողջական վիճակի հետազոտության ակտերի օրինակներին, ստանալ դրանց կրկնօրինակները՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով²³,
- օրենքով նախատեսված դեպքերում, ժամկետներում և կարգով ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից²⁴,
- օրենքով նախատեսված դեպքերում, ժամկետներում և կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ստանալ տարկետում²⁵:

¹⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>

²⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152590>

²¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=147117>

²² <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151135>,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=155050>

²³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151135>,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=153795>,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

²⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

²⁵ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

- վերադասության կարգով կամ դատական կարգով բողոքարկել իրենց վերաբերյալ այն եզրակացությունները, որոնք կայացվել ու կազմվել են մարզային (Երևանի քաղաքային) հանձնաժողովի և Հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից²⁶
- հրաժարվել իր ունեցած տարկետման իրավունքից կամ ստացած տարկետումից, եթե ցանկություն է հայտնում զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության²⁷:

Կարևոր է իմանալ, որ եթե զինվորական հաշվառման ենթակա անձը կամ զորակոչիկը բուժման կարիք ունեցող է ճանաչվել զինվորական հաշվառման (16 տարեկանում) և/կամ զորակոչի (18 տարեկանում) ժամանակ, ապա պետք է զինվորական կոմիսարիատի կողմից ուղեգրվի համապատասխան բժշկական հաստատություն՝ բուժման նպատակով: Ուղեգրումը կատարվում է զինվորական հաշվառման ենթակա անձի կամ զորակոչիկի համաձայնությամբ: Եթե բուժվում է ու ավարտվում է բուժումը, ապա նորից անցնում է զինվորական փորձաքննություն տվյալ զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովում:

Իրազեկված համաձայնության իրավունք

Առանցքային նշանակություն ունի նաև բժշկական հետազոտությունների ենթարկվելու համար զորակոչիկի **իրազեկված համաձայնության իրավունքը:**

Քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ

²⁶ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

²⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152590>

փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը²⁸:

Բուժհաստատությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին²⁹:

Յուրաքանչյուր ոք (պացիենտ) իրավունք ունի մատչելի ձևով ստանալու տեղեկություն իր առողջական վիճակի, հիվանդության ախտորոշման, տրամադրված (տրամադրվող) բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ բուժման մեթոդների ընտրության, կիրառման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ³⁰:

Մարդու գրավոր համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է³¹:

Հոգեկան առողջության կենտրոն ուղեգրվելու և/կամ հոսպիտալացվելու ու բուժում ստանալու դեպքում.

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք իրավունք ունի տալու իրազեկված համաձայնություն

²⁸ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

²⁹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151135>

³⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153795>

³¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153795>

և ցանկացած փուլում հրաժարվելու գիտական կամ փորձարարական նպատակներով կիրառվող բուժական մեթոդներից և միջոցներից³²:

2. Հոգեբուժական օգնությունը և սպասարկումն իրականացվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնության (դիմումի) դեպքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի³³:

3. Որևէ բուժում չպետք է իրականացվի առանց անձի նախապես ծանուցված համաձայնությունը ստանալու՝ բացառությամբ հատուկ սահմանված դեպքերի³⁴:

Ընդ որում, առողջապահության նախարարի կողմից հաստատվել են մի շարք ձևաթղթեր.

Իրազեկված գրավոր համաձայնության ձևաթուղթը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատվել է 2021թ.-ի ապրիլի 7-ին՝ «Մարդկանց բուժման նպատակով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս նոր դեղերի, մեթոդների, ձևերի, միջոցների կենսաբժշկական հետազոտությունների և փորձարկումների իրականացման համար իրազեկված գրավոր համաձայնության ձևաթուղթը» հաստատելու մասին հրամանով³⁵:

Բժշկական միջամտությունից հրաժարվելու ձևաթուղթը հաստատվել է 2021թ.-ի ապրիլի 15-ին՝ ՀՀ առողջապահության նախարարի N 21-Ն հրամանով³⁶:

³² <https://www.arlis.am/documentview.aspx?docid=146066>³³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=146066>

³⁴ «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1991 թ.-ի դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 բանաձև

³⁵ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=110514>

³⁶ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151886&fbclid=IwAR3wpl1_xdI0v8QxdZOvmVoPgbeFsPcd00aHjbcK4SKoUK6hTULZcSTKmc

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՀԱՄԱՐՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՅԻՆՆԵՐՍԻ ԿԱՄ ՆՐԱ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ձևը հաստատվել է 2021թ.-ի օգոստոսի 12-ին՝ ՀՀ առողջապահության նախարարի N 62-Ն հրամանով³⁷:

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ³⁸

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝

- 1) **առողջական վիճակի պատճառով³⁹** ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար,
- 2) մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան **12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում** կամ այլ պետությունում ոչ պակաս, քան **18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն,**
- 3) **ընտանիքի միակ արու զավակն է** և ունի ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:

³⁷ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155203&fbclid=IwAR1ZTmE6BlnIjXslOX0yqSi6uHquytR2EG81ORZajvL_6jh5taI6Q6YB9aw

³⁸ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

³⁹ 2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ կառավարության «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» 404 որոշում

4)) Այլ հիմքով քաղաքացին կարող է բացառիկ դեպքերում (մշակույթի և արվեստի, սպորտի բնագավառներում գործունեության համար, գիտական աստիճան ունեցող քաղաքացուն կրթության և գիտության բնագավառներում գործունեության համար) ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով⁴⁰:

Ընդ որում, պարտադիր զինվորական ծառայությունից ազատված և պահեստագործում հաշվառված քաղաքացին մինչև 27 տարին լրանալը ենթակա է բժշկական վերափորձաքննության՝ հինգ տարին մեկ անգամ: Բժշկական վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի զինվորական ծառայության համար կամ սահմանափակվումով պիտանի զինվորական ծառայության համար ճանաչված քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով⁴¹:

⁴⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=156804>
Տե՛ս նաև՝ ՀՀ կառավարության 12.04.2018 թ. թիվ 451-Ն որոշումը՝ Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, հի կառավարության 2002 թ. օգոստոսի 29-ի N 1394-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թ. հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, ՀՀ կառավարության 12.04.2018 թ. թիվ 457-Ն որոշումը՝ «Մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին», ՀՀ կառավարության 12.04.2018 թ. թիվ 450-Ն որոշումը՝ «Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին»:

⁴¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

ՊԱՐՏԱԴԻՐ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԶԻՄՔԵՐԸ⁴²

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

- 1) առողջական վիճակի պատճառով,**
- 2) ընտանեկան պայմաններից ելնելով:**

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև **ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր ընտրված քաղաքացուն՝** պատգամավորական լիազորությունների ողջ ժամկետով:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև նպատակային ուսումնառության համար՝

- 1) ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն,
- 2) ՀՀ-ում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողին:

Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել նաև ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

⁴² https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649 wAR1ZTmE6BlInJxsIOX0yq-SI6uHquytR2EG810RZajvL_6jh5tal6Q6YB9aw

Առողջական վիճակի պատճառով տարկետում տալը

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

- 1) բուժման կարիք ունենալու կամ
- 2) զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում:

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչև մեկ տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է մեկ անգամ՝ երեք տարի ժամանակով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

Ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տալը

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված գորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

- **65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն**

(որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով **անգործունակ ճանաչված** ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

- **առանց մոր մեծացող երեխա.**

- **երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.**

- **գույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին.**

- **մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն** (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

Ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, քույրը, եղբայրը, տատը, պապը, ինչպես նաև խնամակալ կամ հոգաբարձու ճանաչված այլ անձը:

Քաղաքացին համարվում է միայնակ ծնող ունեցող, եթե՝

- 1) մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած.
- 2) մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.
- 3) մինչև քաղաքացու 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են, և ծնողները բնակվում են միմյանցից առանձին.
- 4) ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, և ծնողները բնակվում են միմյանցից առանձին:

Բացի վերը նշված դեպքերից, շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով:

Քաղաքացին պարտավոր է ստացած տարկետումից հետո յուրաքանչյուր հայտարարված զորակոչի ընթացքում տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնել տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող փաստաթղթերը:

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է մինչև նրա 27 տարին լրանալու օրը: **Եթե 27 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա 27 տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:**

Նպատակային ուսումնառության համար տարկետում տալը

Նշված ոլորտը կարգավորվում է «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու եվ տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թվականի N 430-Ն որոշմամբ⁴³, ըստ որի շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա և ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող (կամ տվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսացող) քաղաքացին (այսուհետ՝ քաղաքացի) ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու ցանկություն ունենալու դեպքում կարող է զորակոչի նախապատրաստական փուլի ժամանակ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը (իսկ 2018 և 2021 թվականների համար՝ նաև մինչև տվյալ տարվա նոյեմբերի 15-ը) դիմում **(ձև N 1)** ներկայացնել իր զինվորական հաշվառման վայրի տարածքային զինվորական կոմիսարիատ:

Նույն որոշմամբ կարգավորում են ՀՀ-ում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող քաղաքացիներին նպատակային ուսումնառության համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու, ինչպես նաև տրված

⁴³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=156222>

տարկետումը դադարելու հետ կապված
հարաբերությունները:

**Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և
սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումների
համար տարկետում տալը**

Այս ոլորտը ևս կարգավորվում է ՀՀ կառավարության
որոշումներով⁴⁴:

Այսպես, գիտության և կրթության բնագավառներում
գործունեության համար պարտադիր գինվորական
ծառայության զորակոչից տարկետում ստանալու
Նպատակով դիմումը ներկայացնելու պահին 17 տարին
լրացած քաղաքացին կարող է սվյալ տարվա ապրիլի
1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև
նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել Կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Բակալավրի (դիպլոմավորված մասնագետի,
ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող (կամ
սվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ
հանդիսացող) քաղաքացիների **նշանակալի
նվաճումներ են համարվում** հանձնաժողովին դիմելու
օրվան նախորդող երեք տարվա ընթացքում՝
1) քաղաքացու ստացած մրցանակները (ոսկե կամ
արծաթե կամ բրոնզե մեդալներ) դպրոցականների
հետևյալ առարկայական միջազգային
օլիմպիադաներում՝
ա. «International Mathematikal Olympiad, IMO»՝
մաթեմատիկա առարկայից,
բ. «International Physics Olympiad, IPhO»՝ ֆիզիկա
առարկայից,
գ. «International Chemistry Olympiad, IChO»՝ քիմիա
առարկայից,
դ. «International Olympiad in Informatics, IOI»՝

⁴⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=145549>

ինֆորմատիկա առարկայից,
 ե. «International Biology Olympiad, IBO»՝ կենսաբանություն
 առարկայից,
 գ. «International Philosophy Olympiad, IPO»՝
 փիլիսոփայություն առարկայից,
 է. «International Astronomy Olympiad, IAO»՝
 աստղագիտություն առարկայից,
 ը. «International Olympiad on Astronomy and Astrophysics,
 IOAA»՝ աստղագիտություն և աստղաֆիզիկա
 առարկաներից,
 թ. «International Geography Olympiad, IGeo»՝
 աշխարհագրություն առարկայից,
 ժ. «International Linguistics Olympiad, ILO»՝
 լեզվաբանություն առարկայից,
 ժա. «International Junior Science Olympiad, IJSO»՝
 բնագիտություն առարկայից,
 ժբ. «International Earth Science Olympiad, IESO»՝ երկրի
 մասին գիտություն առարկայից,
 2) քաղաքացու կողմից հայոց լեզու կամ հայ
 գրականություն կամ հայ ժողովրդի պատմություն
 առարկաներից դպրոցականների հանրապետական
 օլիմպիադաներում 7-ին տեղը գրաված լինելու
 հանգամանքը:

Նշանակալի նվաճում է համարվում քաղաքացու՝
 աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական
 հաստատությունների ակադեմիական
 վարկանիշավորման <http://www.shanghairanking.com/#>
 կայքի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ
 տասնյակում ընդգրկված հաստատություններում
 բակալավրի (դիպլոմավորված մասնագետի,
 ինտեգրացված), մագիստրատուրայի, ասպիրանտուրայի
 և այլ կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու
 կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը՝
 կրթաթոշակի առնվազն 70 տոկոսի վերաբերյալ
 փաստաթղթերի առկայությամբ, բացառությամբ՝
 անվճար կրթական ծրագրեր իրականացնող
 բարձրագույն ուսումնական հաստատությունների:

Ստացած տարկետման ժամկետի ընթացքում յուրաքանչյուր տարվա մինչև սեպտեմբերի 30-ը քաղաքացին կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված անձը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և քաղաքացու զինվորական հաշվառումն իրականացրած ստորաբաժանում են ներկայացնում համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքները՝ հաջորդ կուրս փոխադրվելու վերաբերյալ:

Զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ԲՈՒՀ ընդունված ուսանողների տեղափոխության դեպքում տրամադրված տարկետման իրավունքի փոփոխություն չի կատարվում⁴⁵:

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՈՒ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՆԵՐԸ⁴⁶

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչի կազմակերպման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվում են հանրապետական և, ըստ մարզերի (Երևան քաղաքի)՝ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ՝ ՀՀ պաշտպանության նախարարի ներկայացմամբ⁴⁷:

Այսինքն, շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմիններն են՝

1) զինվորական կոմիսարիատը. շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի

⁴⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=70813>

⁴⁶ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

⁴⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152590>

պատշաճ իրականացման համար պատասխանատու է համապատասխան գինվորական կոմիսարիատը:

2) մարզային զորակոչային հանձնաժողովը.

Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովը գինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմին է, որն ստեղծվում է շարքային կազմի պարտադիր գինվորական ծառայության զորակոչը հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ:

3) հանրապետական զորակոչային հանձնաժողովը.

որը պարտադիր գինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմին է, որի անհատական կազմը հաստատվում է պարտադիր գինվորական ծառայության զորակոչը հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ:

Զինվորական կոմիսարիատը իրավասու բժշկական հանձնաժողով է ներկայացնում զորակոչի ենթակա և առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիների նախնական և այլ հետազոտությունները, նրանց առողջական վիճակի վերաբերյալ առկա այլ փաստաթղթեր՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով բժշկական փորձաքննություն իրականացնելու և պիտանիության վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար:

Հանրապետական զորակոչային հանձնաժողովը

իրավասու բժշկական հանձնաժողովների կողմից քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություններն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում՝ քաղաքացուն պարտադիր գինվորական ծառայությունից ազատելու կամ տարկետում տալու մասին և եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է ՀՀ պաշտպանության նախարարին:

Կարևոր է իմանալ, որ հանրապետական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային

հանձնաժողովների, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության կամ կայացրած որոշումների (տրված եզրակացությունների) վերաբերյալ բողոքներ ներկայացնելը՝ մինչև այդ որոշումների (տրված եզրակացությունների) վերանայումը, չի կասեցնում դրանց կատարումը⁴⁸:

Քաղաքացիների բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝⁴⁹

- զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովները (արտահաստիքային) կամ,
- ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողով (արտահաստիքային),
- կենտրոնական բժշկական հանձնաժողով (արտահաստիքային):

Զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովները (ԶԲՀ), համապատասխան զինվորական կոմիսարի առաջարկությամբ և մարզպետների (Երևանի քաղաքապետի) ներկայացմամբ, կազմավորվում են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով՝ մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը: ԶԲՀ-ների կազմում ընդգրկվում են թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, օտոլարինգոլոգ, մաշկաբան և բուժքույր-քարտուղար: ԶԲՀ-ների մասնագետ-բժիշկների կազմից նշանակվում է նաև պատասխանատու անձ, որը համակարգում է հանձնաժողովի աշխատանքները:

ԶԲՀ-ի գործառույթներն են՝

- զինապարտներին զինվորական հաշվառման,

⁴⁸ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=158649>

⁴⁹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151135>

գորակոչի, վարժական հավաքների, ինչպես նաև զինված ուժերի համար մասնագետների պատրաստության և ռազմական ուսումնական հաստատությունների (ՌՈՒՀ) թեկնածուների ընտրության ժամանակ փորձաքննության ենթարկելը.

- պահեստագործում հաշվառված զինապարտներին փորձաքննության ենթարկելը.

- զինապարտների պիտանիության վերաբերյալ եզրակացություն կայացնելը.

- փորձաքննության արդյունքներն ամփոփելը և դրա մասին զինվորական կոմիսարին հայտնելը:

Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության գորակոչային բժշկական հանձնաժողովները (ԱՊ ԶԲՀ), համապատասխան ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության տնօրենի առաջարկությամբ և մարզպետների (Երևանի քաղաքապետի) ներկայացմամբ, կազմավորվում են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը: ԱՊ ԶԲՀ-ների կազմում ընդգրկվում են թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, օտոլարինգոլոգ, մաշկաբան և բուժքույր-քարտուղարը: ԱՊ ԶԲՀ-ների մասնագետ-բժիշկների կազմից նշանակվում է նաև պատասխանատու անձ, որը համակարգում է հանձնաժողովի աշխատանքները և պատասխանատու է զինվորական կոմիսարիատի հետ համագործակցության համար:

ԱՊ ԶԲՀ-ի գործառույթներն են՝

- զինապարտներին զինվորական հաշվառման, գորակոչի, վարժական հավաքների, ինչպես նաև զինված ուժերի համար մասնագետների պատրաստության և ՌՈՒՀ-երի թեկնածուների ընտրության ժամանակ փորձաքննության ենթարկելը.

- պահեստագործում հաշվառված գինապարտներին փորձաքննության ենթարկելը.
- գինապարտների պիտանիության վերաբերյալ եզրակացություն կայացնելը.
- փորձաքննության արդյունքներն ամփոփելը և դրա մասին գինվորական կոմիսարին հայտնելը:

Կենտրոնական բժշկական հանձնաժողովը (ԿԲՀ)

բժշկական փորձաքննության մարմին է, որի անհատական կազմը հաստատվում է պարտադիր գինվորական ծառայության զորակոչը հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ: ԿԲՀ-ի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը, տեղակալը (բժիշկ), անդամները՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, մաշկաբան, օտոլարինգոլոգ (ՀՀ առողջապահության նախարարի ներկայացրած թեկնածուն), համակարգչային օպերատոր ու քարտուղար: ԿԲՀ-ն բժշկական փորձաքննության ղեկավար մարմին է և հաշվետու է ՀՀ պաշտպանության նախարարին: ԿԲՀ-ի անդամ չի կարող նշանակվել սույն կարգով սահմանված այլ բժշկական կամ ռազմաբժշկական հանձնաժողովի անդամ նշանակված անձը:

ԿԲՀ-ի գործառույթներն են՝

- գինվորական կոմիսարիատներում նախնական բժշկական հետազոտում և փորձաքննություն անցած զորակոչիկներին փորձաքննության ենթարկելը.
- նախագորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական փորձաքննության աշխատանքներում գործնական և մեթոդական օգնություն ցուցաբերելը գինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին.
- նախագորակոչային և զորակոչային տարիքի անձանց հետազոտման և բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առողջապահական մարմինների հետ համագործակցելը.

- գորակոչիկների բժշկական փորձաքննության արդյունքներով եզրակացություն կայացնելը՝ անհրաժեշտության դեպքում եզրակացության կայացման համար մասնագիտական կարծիք ստանալու նպատակով դիմելով ՀՀ առողջապահության նախարարության խորհրդատուներին.
- զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների գործունեությունը վերահսկելը.
- անհրաժեշտության դեպքում նախկինում կայացրած իր եզրակացությունները վերանայելը:

ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ և ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԶԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախագորակոչային տարիքի (14-15 տարեկան, 16-18 տարեկան, զինվորական հաշվառում) քաղաքացիների բժշկական հետազոտությունները ներառում են ⁵⁰

- արտաքին մարմնական զննումը,
- մարդաչափությունը,
- արտաքին շնչառական ֆունկցիայի որոշումը (սպիրոմետրիա)՝ բժշկական ցուցումի դեպքում,
- ուժաչափությունը (դինամոմետրիա)՝ բժշկական ցուցումի դեպքում,
- ֆլյուորոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը
- արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը,
- մեզի և արյան ընդհանուր քննությունը,
- էլեկտրասրտագրումը,
- որովայնի օրգանների ՈւՁ հետազոտությունը.
- կանխարգելիչ պատվաստումները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված պատվաստումների ազգային օրացույցի:

⁵⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151135>

Ձորակոչային տարիքի (18-27 տարեկան՝ ներառյալ պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրված և 27 տարին չլրացած, ինչպես նաև 27 տարեկանից հետո՝ օրենքով սահմանված կարգով զորակոչի ենթակա) քաղաքացիների բժշկական հետազոտությունները ներառում են՝⁵¹

- արտաքին մարմնական զննումը,
- մարդաչափությունը,
- արտաքին շնչառական ֆունկցիայի որոշումը (սպիրոմետրիա),
- ուժաչափությունը (դինամոմետրիա),
- միկրոարեցիպիտացիայի ռեակցիան,
- արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը (եթե կատարված չէ), որի վերաբերյալ գրառումը պարտադիր կատարվում է զինվորական գրքույկում,
- ֆլյուորոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը,
- մեզի և արյան ընդհանուր քննությունը,
- էլեկտրասրտագրումը,
- որովայնի օրգանների ՈւՁ հետազոտությունը,
- տուբերկուլիւնային մաշկային փորձը,
- կանխարգելիչ պատվաստումները՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված պատվաստումների ազգային օրացույցի:

⁵¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151135>

ՈՉ ԽՏՐԱԿԱՆ ԵՎ ՉԳԱՅՈՒՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԽՈՑԵԼԻ ՈՒ ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱՁՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՈՒ ՁՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ի՞նչ է խտրականությունը

Խտրականությունը էապես նման իրավիճակում որոշակի հատկանիշներով օժտված անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է առանց որևէ օբյեկտիվ հիմքի և ողջամիտ բացատրության⁵²:

Տարբերակված վերաբերմունքը կամ անհանդուրժողականությունը դրսևորվում է անձանց նկատմամբ մի շարք պատճառներով, որոնցից են ռասան, մաշկի գույնը, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումը և դրությունը, մշակութային պատկանելիությունը, սեռը, լեզուն, տարիքը, արտաքին տեսքը, առողջական վիճակը, հաշմանդամությունը, գենդերային ինքնությունը, սեռական ուղղվածությունը, քաղաքական գաղափարները և այլ համոզմունքները, կրոնը կամ դավանանքը, քաղաքացիությունը, զբաղվածությունը, ընտանեկան կամ ամուսնական կարգավիճակը և այլն:

Ընդ որում, խտրականությունը կարող է դրսևորվել մի քանի տեսակներով, որոնք են.

- **ուղղակի խտրականությունը**, որը ենթադրում է որոշում, գործողություն կամ անգործություն, որն ուղղված է կոնկրետ անձի կամ անձանց խմբի դեմ և որոնց արդյունքում անձը կամ անձանց խումբը հայտնվում է պակաս բարենպաստ իրավիճակում այլ անձանց կամ անձանց խմբի համեմատ,
- **անուղղակի խտրականությունը**, որը ենթադրում է

⁵² <https://hkdepo.am/up/docs/discrimination-brochure-by%20NGNGO-Armenia.pdf>, Տե՛ս նաև՝ Կիրաքյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 40094/05, 2/10/2012, § 199

կիրառում՝ չեզոք կերպով: Օրինակ՝ օրենքը, քաղաքականությունը, պայմանը, գործողությունը, անգործությունը, պրակտիկան, որոնց կիրառման դեպքում կոնկրետ անձը կամ անձանց խումբը զրկվում է որոշակի իրավունքներից ու ազատությունների իրացումից,

- **ասոցացված խտրականությունը**, որը ենթադրյալ հիմքի առիթով դրսևորվող տարբերակված վերբերմունքն է,

- **հետապնդումը, սեռական ոտնձգությունները, խտրականության հրահրումը և դրդումը, վիկտիմիզացիան, սեգրեգացիան և այլն:**

Նախագորակոչային և զորակային տարիքի անձանց նկատմամբ բժշկական փորձաքննությունների ընթացքում հանդիպում են հիմնականում խտրականության հետևյալ դրսևորումները⁵³.

- ռասայական խտրականություն, նացիոնալիզմ,
- գենդերային հիմքով խտրականություն,
- կրոնի, հավատքի հիմքով խտրականություն, քսենոֆոբիա կամ այլատյացություն,
- առողջական վիճակով և/կամ հաշմանդամության կարգավիճակով պայմանավորված խտրականություն, էյբլիզմ,
- սեռական ուղղվածությամբ պայմանավորված խտրականություն, օրինակ՝ հոմոֆոբիա, հետերոսեքսիզմ,
- էթնոցենտրիզմ՝ ենթամշակութային, հակամշակութային պատկանելիություն ունեցող

⁵³ «Զորակոչիկների նկատմամբ խտրականության դրսևորումները բժշկական փորձաքննությունների ընթացքում» զեկույց, 2022, «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ

Խտրականության արգելքը

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդված.

«Խտրականության արգելքը»

Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Կարևոր է հիշել, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը.

«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները»

1. ՀՀ-ում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: (...):

Խտրականության հետևանքով խոցելի ու թիրախավորված խմբերին պատկանող նախազորակոչային և զորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիները, երբեմն նաև նրանց ընտանիքի անդամները, խնամակալներն ու հոգաբարձուները, ներկայացուցիչները հաճախ հայտնվում են այնպիսի իրավիճակներում, երբ չեն կարողանում լիարժեք իրացնել իրենց իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, զինվորական կոմիսարիատներում, ինչպես նաև նախազորակոչային և զորակոչային գործընթացներում ներգրավված և ծառայություններ մատուցող հոգեկան առողջության կենտրոններում, բժշկական և ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում խախտվում են անձանց հետևյալ իրավունքները⁵⁴.

⁵⁴ «Զորակոչիկների նկատմամբ խտրականության դրսևորումները բժշկական փորձաքննությունների ընթացքում» գեկույց, 2022, «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ

- **Մարդու արժանապատվության անխախտելիության իրավունքը** (ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված),
- **Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը** (ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդված),
- **Խոշտանգման, անմարդկային վերաբերմունքի կամ պատժի արգելքի իրավունքը** (ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդված),
- **Մտավոր և ընտանեկան կայնքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը** (ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդված)
- **Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը** (ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդված) և այլն:

Բժշկական փորձաքննությունների ողջ ընթացքում զորակոչիկներն իրավունք ունեն պահանջելու հարգալից և ոչ խտրական վերաբերմունք զինվորական կոմիսարիատի աշխատակիցներից և բժշկական հանձնաժողովների անդամներից և իրենք էլ իրենց հերթին պարտավոր են ցուցաբերել նույն մոտեցումը զինվորական կոմիսարիատի աշխատակիցներից և բժշկական հանձնաժողովների անդամների նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող նախազորակոչիկների և զորակոչիկների համար

Պահանջեք, որպեսզի Ձեզ հետ կամ Ձեր մասին խոսելիս զինվորական կոմիսարիատների աշխատակիցները և բժշկական հանձնաժողովների անդամներն օգտագործեն հետևյալ արտահայտությունները⁵⁵.

- հաշմանդամ անձ, հաշմանդամություն ունեցող անձ,
- ֆունկցիոնալ խանգարում ունեցող անձ,

⁵⁵ Գործնականում հաճախ օգտագործվում են սխալ և ոչ զգայուն արտահայտություններ, օրինակ՝ «գաճաճ մարդ, բնածին դեֆեկտ ունեցող, ինվալիդ, կաթվածահար, անվասայլակին գամված, սայլակավոր, խուլ, կակազող, մի ոտքանի, էպիլեպսիկ, դաուն, հետամնացություն ունեցող» և այլն:

- մտավոր հաշմանդամություն ունեցող անձ, մտավոր խնդիրներ ունեցող անձ, զարգացման խնդիր ունեցող անձ,
- դաունի համախտանիշով ապրող կամ ունեցող անձ,
- էպիլեպսիա ունեցող անձ,
- հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ,
- թույլ լսող/տեսողություն ունեցող անձ,
- լսողական/տեսողական խնդիրներ ունեցող անձ,
- կուրություն ունեցող անձ,
- տեսողական/լսողական հաշմանդամություն ունեցող անձ,
- խոսքի հետ կապված խնդիրներ ունեցող անձ,
- անվասայլակով տեղաշարժվող/օգտվող անձ,
- հենաշարժողական խնդիր ունեցող անձ,
- ուղեղային կաթված ունեցող անձ,
- հասակի զարգացման խնդիր ունեցող կամ կարճահասակ անձ,
- ի ծնե հաշմանդամություն ունեցող անձ,
- իմացական խնդիրներ ունեցող անձ,
- ցնցումներ և/կամ ուշաթափություն ունեցող անձ,
- ուսուցման դժվարություններ ունեցող անձ,
- զարգացման դանդաղ ընթացք ունեցող անձ,

ԳԲՏԶ+ նախագորակոչիկների և գորակոչիկների համար

Պահանջեք, որպեսզի Ձեզ հետ կամ Ձեր մասին խոսելիս գինվորական կոմիսարիատների աշխատակիցները և բժշկական հանձնաժողովների անդամներն օգտագործեն հետևյալ արտահայտությունները⁵⁶.

- քիսեքսուալ կամ երկսեռական անձ,
- նույնասեռական (գեյ) կամ հոմոսեքսուալ անձ,
- տրանսգենդեր կամ փոխգենդեր անձ,
- տրանսսեքսուալ կամ փոխսեռական անձ,

⁵⁶ Գործնականում հաճախ օգտագործվում են սխալ և ոչ զգայուն արտահայտություններ, օրինակ՝ «հոմոսեքսուալիստ, արվամոլ, հերմաֆրոդիտ, տարասեռամոլ, սեռի շեղում, սեռական կողմնորոշման խանգարում ունեցող, չկողմնորոշված, անադեկված, սեռի խանգարում ունեցող անձ» և այլն:

- ինտերսեքս կամ միջսեռական անձ,
- ոչ-բիսար, ագենդեր, բիգենդեր, ապագենդեր անձ և այլն,
- քվիր անձ և քվիրագենդեր անձ,
- սեռական ուղղվածություն կամ սեռական կողմնորոշում,
- Նույնիսկ եթե ԳԲՏԶ+ անձ չեք, պահանջեք, որ օգտագործեն հետերոսեքսուալ կամ տարասեռական անձ տերմինը:

Կրոնական տարբեր ուղղությունների հետևորդ, մեծամասնությունից տարբերվող հավատք ունեցող, կրոնական կազմակերպությունների անդամ հանդիսացող կամ կրոնական հավատալիքներ չունեցող նախագորակոչիկների և գորակոչիկների համար

Պահանջեք, որպեսզի Ձեզ հետ կամ Ձեր մասին խոսելիս գլխավորական կոմիսարիատների աշխատակիցները և բժշկական հանձնաժողովների անդամներն օգտագործեն հետևյալ արտահայտությունները⁵⁷.

- մահմեդական, հուդայական, բուդդայական,
- աթեիստ,
- մեծամասնության եկեղեցի,
- կրոնական կազմակերպություն,
- ոչ ավանդական կրոնական ուղղություն կամ հավատալիք:

⁵⁷ Գործնականում հաճախ օգտագործվում են սխալ և ոչ զգայուն արտահայտություններ, օրինակ՝ «աղանդավոր, անհավատ, ազգային եկեղեցի, ազգ քանդող, մոլորյալ, հոգեորսության զոհ դարձած, շեղված միտք ունեցող, ջիոդ, մուսուլման» և այլն:

